ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱԿ ԾՀԾՁԲ 16/04» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

/կազմվում է համաձայն «Գնումների մասին» օրենքի 8-րդ հոդվածի/

*1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը և ապրանքի համառոտ նկարագիրը*

Հայաստանի զգային կինոկենտրոն ՊՈԱԿ-ի կարիքների համար ավիատոմսերի ձեռքբերման ծառայությունների նպատակով Կինոկենտրոնի տնօրենի 14.04.16թ. թիվ 13-Գ հրամանի համաձայն ստեղծվել է պատասխանատու ստորաբաժանում, որը 15.04.16թ-ին պատրաստել է գնման հայտ և 15.04.16թ-ի զեկուցագրով առաջարկել գնահատող հանձնաժողովի կազմը: Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ-ի տնօրենի 15.04.16 թ.-ի թիվ 14-Գ հրամանով սահմանվել է գնահատող հանձնաժողովի կազմը:

Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ (ք. Երևան, Պուշկին 38/2) գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. ապրիլի 18-ին հաստատվել է «ՀԱԿԾՀԾՁԲ16/04» ծածկագրով ընթացակարգի հրավերը և հայտարարության տեքստը, որն էլ նույն օրը ուղարկվել է carayutyun-15-2@shh.gnumner.am կայքին:

Սրցութային գործընթացը կազմակերպվել է թղթային եղանակով:

*2. Գնման անհրաժեշտության և գնման ձևի ընտրությունը*

Ծառայության ձեռքբերման անհրաժեշտությունը պայմանավորված է ռեժիսոր Հովհաննես Գալստյանի և Պրոդյուսեր Ռաֆֆի Նիզիբիլյանի Կաննի փառատոնի մասնակցության համար Երևան-Նիցցա-Երևան ավիատոմսով ապահովելու անհրաժեշտությամբ: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ ենթակետի գնման ձև է ընտրվել Շրջանակային համաձայնագիրը:

*3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները*

Հրավեր է հանդիսանում «ՀԱԿԾՀԾՁԲ16/04» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված ընթացակարգի հրավերը:

*4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները*

Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

*5. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, հասցեները և կապի միջոցները*

«ՀԱԿԾՀԾՁԲ16/04» ծածկագրով շրջանակային ընթացակարգի հայտերը բացվել են 2016թ. ապրիլի 28-ին: Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| | | |
|---|---|---|
| 1. Ավիատուր Գրուպ ՍՊԸ | ք. Երևան, Թումանյան 2/1 | հեռ 095 460 460 |
| 2. Արմենիա Թրավել + Մ ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 4 | հեռ 010 563 667 |
| 3.Էդալեքս ՍՊԸ | ք. Երևան, Պուշկին 33 | հեռ 010 534 161 |
| 4. Պեգաս Թրավել քլաբ ՍՊԸ | ք. Երևան, Սայաթ Նովա 19/1 | հեռ 060 514 351 |
| 5. Լոկա ՍՊԸ | ք. Երևան, Մաշտոցի 38 | հեռ 010 500 227 |

## 6.Հայտերով ներկայացված գները

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկները.

/ՀՀ դրամ/

| Չափա-բաժնի համարը | Մասնակցի անվանումը | Գնման առարկայի անվանումը՝ | Չափման միավորը | Քանակը | Գնի առաջարկը առանց ԱԱՀ | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ավիատուր Գրուպ ՍՊԸ | ավիատոմս Երևան-Նիցցա-Երևան | հատ | 2 | 678000 | 678000 |
| | Արմենիա Թրավել + Մ ՍՊԸ | ավիատոմս Երևան-Նիցցա-Երևան | հատ | 2 | 654000 | 654000 |
| | Էդալեքս ՍՊԸ | ավիատոմս Երևան-Նիցցա-Երևան | հատ | 2 | 652000 | 652000 |
| | Պեգաս Թրավել քլաբ ՍՊԸ | ավիատոմս Երևան-Նիցցա-Երևան | հատ | 2 | 650000 | 650000 |
| | Լոկա ՍՊԸ | ավիատոմս Երևան-Նիցցա-Երևան | հատ | 2 | 624800 | 624800 |

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «Լոկա» ՍՊԸ-ն 1 չափաբաժն մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

## 7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները

Հայտերի գնահատումը կատարվել է մասնակիցների կողմից ներկայացված հայտը հրավերի համապատասխանության որոշմամբ:

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Լոկա» ՍՊԸ կազմակերպությանը, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և հրավերի պահանջներին համապատասխանող մասնակից:

## 8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը

Մերժված հայտեր առկա չեն:

## 9. Պայմանագիր կնքելու հիմնավորումը

«Լոկա» ՍՊԸ-ն ծանուցվել է ընտրված մասնակից ճանաչվելու վերաբերյալ և ներկայացվել է կնքվելիք պայմանագրի նախագիծը: Սակայն նույն օրը ծանուցումից հետո պարզ դարձավ , որ Կաննի փառատոն մեկնող մասնակիցներից մեկի հանկարծակի առողջական խնդիրների ծագման պատճառով նրա տոմսի գնման պահանջը վերացավ: Հանձնաժողովի որոշմամբ՝ տոմսերի քանակի հետ կապված փոփոխության մասին Լոկա ՍՊԸ-ն ստացավ ծանուցում: Ծանուցման օրինակը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվեց նաև մնացած մասնակիցներին: «Լոկա» ՍՊԸ-ն ներկայացրեց պայմանագրի կատարման համար առաջարկված գինը՝ 312400 դրամ / Երեք հարյուր տասներկու հազար չորս հարյուր դրամ/:

«ՀԱԿԾՁԲ16/04» ծածկագրով շրջանակային ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի հետ 2016թ. ապրիլի 29-ին կնքվել է գնման պայմանագիր: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի gnumnermincult.am կայք էջում տեղադրվել է կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

*10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը*

Այդպիսիք չեն հայտնաբերվել:

*11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները*

Գնման գործընթացի շրջանակում բողոքներ չեն ներկայացվել:

*12. Այլ անհրաժեշտ տեղեկություններ*

Չկան:

Պատվիրատուի ղեկավար՝ Գ. Գևորգյան

Գնման ընթացակարգի քարտուղար՝ Ն. Ասատրյան

Կ.Տ

<< 02 >> << 05 >> 2016թ.